ՎԱՐԴԱՏՈՆ

ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԻՐՈՎ ԼԵՑՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս տարվա Վարդատոնը բացվեց Սայաթ-Նովայի «Աշխարհումըն իմն դուն իս» երգով:

Միջոցառման վարողները՝ Պ.Ադամյանի անվան թատրոնի դերասանուհի Նանո Պողոսյանը եւ Թբիլիսիի Կ.Մարջանիշվիլու անվան Պետական ակադեմիական թատրոնի դերասան Գուրամ Ջաշին, բեմ հրավիրեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին:

Սրբազան հայրը իր ելույթում կոչեց պահել-պահպանել հայ-վրացական միասնությունը խորհրդանշող բարի ավանդույթները, այդ շարքում՝ նաեւ Վարդատոնը, եւ քրիստոնեական եղբայրությամբ ուղեկցվող նոր սխրանքներով շարունակել համատեղ գոյակցությունը:

Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին համաքաղաքացիներին հղված իր ուղերձում մասնավորապես նշեց. «Մեր երկրին անհրաժեշտ է հույս, ապագայի հանդեպ հավատ, դրա համար պետք է կանգնենք իրար թիկունքի: Մենք միասին պետք է կարողանանք մեր քաղաքին վերադարձնել իր վաղեմի շուքն ու փայլը, իր համն ու հոտը: Կեցցե մեր բարեկամությունը»:

- Թանկագին թբիլիսցիներ, ամենակարեւորը, չենթարկվենք ուժգին ազդեցությանը այն չար հողմերի, որ կան աշխարհում այսօր, կար երեկ, եւ հավանաբար կլինի նաեւ վաղը: Մեր քաղաքը կարող է պարծենալ աշխարհի առջեւ իր համամարդկային սիրո անօրինակ դրսեւորումներով,- իր ելույթում նշեց գրող-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Կարեն Մելիքյանը ներկաներին փոխանցեց արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի ողջույնները Վարդատոնի մասնակիցներին: Ապա իր խոսքում կարեւորեց մարդկության բարության եւ սիրո ջատագով Սայաթ-Նովայի հիշատակը համատեղ տոնելու հայ ու վրաց ժողովուրդների բարի կամքը:

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի առաջին տեղակալ Քեթեւան Ցիխելաշվիլին Սայաթ-Նովա քնարերգուին դիտեց իբրեւ համաշխարհային ֆենոմեն, իսկ նրան նվիրված տոնախմբությունը՝ մեր ժողովուրդների միասնականության առհավատչյա:

Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլու, Հայաստանի գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանի, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանի ելույթներում ընդգծվեց երկվորյակ եղբայրներ Հայոս-Քարթլոսից մինչ այսօր շարունակվող ու մերօրյա բարեկամությունը կերտող ժամանակակից հայ-վրաց մշակույթների համագործակցությունը:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը իր ելույթը սկսեց կովկասյան երեք լեզուներով՝ ներկաներին հիշեցնելով Սայաթ-Նովայի՝ երեք ժողովուրդների գրական մշակույթում ունեցած դերը, նրա մեծ մարդասիրությունը: Նա ընթերցեց Իոսեբ Նոնեշվիլու Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծությունը:

ՎՀՄ նախագահ Հենրիխ Մուրադյանը իր խոնարհումը բերեց Վարդատոն կոչվող գեղեցիկ երեւույթին, հորդորեց համաքաղաքացիներին ապրել Սայաթ-Նովա պոետի ստեղծագործական հավատամքով:

Ելույթները ուղեկցվեցին Մեծն գուսանի հոգեհմա երգ ու տաղով:

Գեղարվեստական բաժինը սկսվեց Երեւանից ժամանած «Սայաթ-Նովա» աշուղական համույթի (ղեկ.՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյան) անզուգական կատարումներով, հնչեցին Հայաստանի եւ Վրաստանի մշակութային տարբեր խմբերի ելույթները: Սայաթնովյան տաղերի ասմունքով հանդես եկան Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասանները՝ Վրաստանի վաստակավոր արտիստ Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Ռոբերտ Աղաջանյանը, ուրիշներ:

Միջոցառման ավարտին բեմ բարձրացան Վան Բայբուրթյանը, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վիրահայերի միության» նախագահ Նարեկ Բայանդուրյանը, Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը: Վ.Բայբուրթյանը, դիմելով ներկաներին, ասաց, որ 2016 թվականին կվերականգնվի ընդհատված «Գարունը գարնան մեջ» ամենամյա դպրոցական փառատոնը, որին կմասնակցեն Թբիլիսիի ու արդեն առաջին անգամ երկրի 10 շրջանների ստուգատես-մրցույթներին հաղթած դպրոցականների երգի-պարի խմբերը: Իսկ Արմեն Բայանդուրյանը եւ Լեւոն Չիդիլյանը շնորհակալություն հայտնեցին Վարդատոնի կազմակերպիչներին եւ հանդիսատեսին:

Վարդատոնի հանդիսությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը, Թբիլիսիի սակրեբուլոյի պատգամավոր Իսանիի մունիցիպալիտետից Իլիա Ջիշկարիանին, Թբիլիսիի Կրծանիսիի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գիորգի Կոպալեիշվիլին, Թբիլիսիի Իսանիի մունիցիպալիտետի վարչության նախագահ Վախթանգ Ղիզիղուրաշվիլին, Ծալկայի սակրեբուլոյի նախագահ Իրակլի Գիգինեիշվիլին, «Տալի-Դեւելոպեմենտի» սեփականատեր Դավիթ Ճիճինաձեն, բանաստեղծուհի, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ Ռաֆիկ Աղաջանյանը, պաշտոնական այլ անձինք:

Վերջում նշենք, որ այս տարի «Վարդատոնի» անցկացման նախաձեռնությունը ստանձնել էր «Վիրահայերի միությունը», Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական թատրոնի, ՎՀԳ «Վերնատուն» միության, Վրաստանի գրողների միության հետ միասին, Թբիլիսիի քաղաքապետարանի, Վրաստանի ու Հայաստանի մշակույթների նախարարությունների եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԴՊՐՈՑ

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՍԿԻԶԲՆ ԱՎԵՏՈՂ ՂՈՂԱՆՋՆԵՐ...

Վրաստանի հանրային դպրոցներում այս օրերին անց են կացվում միջոցառումներ, որը ե՛ւ շրջանավարտները, ե՛ւ մանկավարժները, ե՛ւ ծնողները անվանում են հրաժեշտի տխուր եւ նոր կյանքի վառ հույսերի տոն, իսկ պաշտոնապես այն կոչվում է «Վերջին զանգ»:

Ինչպես մեզ հայտնեցին Թբիլիսիից եւ երկրի 10 շրջանների ռեսուրս-կենտրոններից, «Վերջին զանգի» արարողություններ կայացան 120 հանրային հայկական դպրոցներում:

Թբիլիսիի թիվ 104 հանրային հայկական դպրոցի (տնօրեն՝ Իրինա Ժամկոչյան) հերթական՝ 2014-2015 ուստարվա «Վերջին զանգի» հանդեսը կայացավ մայիսի 30-ին, հինավուրց կրթօջախի 77-րդ շրջանավարտների համար:

Նոր կյանքի երազանքներով լեցուն 13 երիտասարդ իրենց շնորհակալությունը սիրելի դպրոցին, ուսուցիչներին, ծնողներին հայտնեցին ավանդական ու իրենց համար դպրոցական վերջին հանդեսով: Ի դեպ, նրանց շարքերում էր ոսկե մեդալակիր Ժաննա Մկրտումյանը, ում հետ առանձնակի հույսեր կապվեցին:

Շրջանավարտներին ողջունեցին Վիրահայոց թեմի «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի (տնօրեն՝ Եվգենյա Մարկոսյան) սաները, ովքեր այս դպրոցի 2015-2016 ուստարվա ապագա առաջին դասարանցիները կդառնան:

Ուրախ համերգը, որի մասնակիցները շրջանավարտներն էին, ուղեկցվեց դպրոցական տարիների հուշերով, շնորհակալության խոսքերով, ժպիտներով ու արցունքով... Հուզված ասմունքեցին, երգեցին, պարեցին, երախտիքի խոսքերով ծաղիկներ նվիրեցին իրենց 12 տարի կյանքի ու գիտության դասեր ուսուցանող մանկավարժներին:

Եվ ստացան դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի, ուսմասվար Ալմարի Սիրադեղյանի, դասղեկ Ալինա Ավետյանի, ծնողների, հյուրերի՝ Վրաստանի խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանի, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության ազգային ծրագրերի համակարգող Կարինե Մանուկյանի, դպրոցի նախկին ուսուցիչ Նորայր Բաղդասարյանի, «Հայարտուն» մշակութային կենտրոնի պատասխանատու Լեւոն Չիդիլյանի, Վիրահայոց թեմի մամլո դիվան Սուսաննա Խաչատրյանի բարեմաղթանքները:

Այդ մաղթանքներում կար այն հույսը, որ Մեծ կյանք մտնող այս պատանիներն ու աղջիկները կդառնան իրենց ազգի բարոյական բարձր հատկանիշների կրողներ ու Վրաստանի ազնիվ քաղաքացիներ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ì²ðì°È²Î°ðä

ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՉՏԽՐԵԼ

Հաճախ լուսաբայիկ, չգիտեմ ինչո՞ւ, ընկճվածություն եմ զգում, ինչանիկ անկախ ամեն ինչի նկատմամբ վատ եմ տրամադրվում: Նման դեպքերում, նկատել եմ՝ իրոք, ամեն ինչ «թարսվում է»: Հասկանում եմ, որ դա պայմանավորված է ինչանով, սակայն չգիտեմ՝ ինչպե՞ս դա հաղթահարել:

Ա. Մելքոնյան

Նինոծմինդա

Իրոք, թե' լավ, թե' վատ տրամադրությունը պայմանավորված է ձեզանով: Իրականություն է նաեւ այն, որ տրամադրվածությունից է կախված նաեւ գործերի ընթացքը: Ուզո՞ւմ եք ամեն օր լավ տրամադրություն ունենալ: Դա հեշտ է: Ահա մի քանի խորհուրդ:

1) Քնելիս մտածեք միայն լավ բաների մասին: Այդ դեպքում, դուք կկարողանաք լավ տրամադրությամբ քնել, եւ սկսվող օրը կանցնի դրական մթնոլորտում:

2) Մի' կենտրոնացեք այն ամենի վրա, ինչը փչացնում է ձեր տրամադրությունը, բայց ոչ մի կերպ դա չեք կարող փոխել:

3) Որեւէ հաճելի բան պլանավորեք: Թեկուզ, եթե դրան հասնելու համար ձեզ շաբաթներ կամ նույնիսկ ամիսներ են պետք: Հավատացեք, հաճելի սպասումը այդ ողջ ընթացքում ձեզ կօգնի վայելել յուրաքանչյուր օրը:

²è àÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

ՍՈՒՐՃԸ ՆՎԱԶԵՑՆՈ՞ՒՄ Է ՄԱՀՎԱՆ ՎՏԱՆԳԸ

Սուրճի օգտագործման հարցով շատ նյութեր եմ կարդացել. միմյանց հակադրվող, երբեմն էլ՝ միմյանց կտրականապես ժխտող: Վերջապես գիտնականները չե՞ն կարող գալ միասնական եզրակացության՝ սուրճի օգտագործումը օգտավե՞տ է, թե՞ վնասակար:

Տ. Մնացականյան

Բաթումի

Սուրճի ամենօրյա գործածումն ավելի քան 15 տոկոսով նվազեցնում է մահվան վտանգը միջին տարիքի եւ տարեց մարդկանց մոտ: Այս մասին ասված է Ճապոնիայի Ուռուցքաբանական ազգային կենտրոնի՝ մայիսի 7-ին հրապարակված զեկույցում:

Մասնագետները կատարել են ընդգրկուն հետազոտություն, որին մասնակցել է 40-ից մինչեւ 69 տարեկան ավելի քան 90 հազար մարդ: Հարցվողներին առաջարկվել է լրացնել իրենց ամենօրյա սննդաբաժնին վերաբերող հարցաթերթիկները: Դրանից հետո, Ուռուցքաբանական կենտրոնի աշխատակիցներն ստացված տեղեկատվությունը զուգադրել են վերջին 19 տարվա ընթացքում մահացության վերաբերյալ տվյալների հետ:

Արդյունքում, նրանք հանգել են այն եզրակացության, որ նրանց մոտ, ովքեր օրական 1-2 գավաթ սուրճ են ըմպում, մոտ ժամանակներս մահանալու վտանգը նվազում է 15 տոկոսով: Ըստ որում, օրական 3-4 գավաթ ըմպողների թվում այս ցուցանիշը նվազում է 24 տոկոսով:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆ ԲԱՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԵՐԵԽԱՅԻՆ ՊԱՐՏԱԴՐԵԼ

Շատերը երեխայի դաստիարակության գործում ծնողների խստությունը կարեւոր նախապայման են համարում: Սակայն, չի կարելի երեխային ստիպել որոշ բաներ անել, անգամ եթե կարծում եք, որ դա նրա իսկ օգտին է: Ստիպողաբար արվածն անպայման իր բացասական ազդեցությունը կունենա երեխայի հոգեկան առողջության վրա:

Որքան էլ խստության կողմնակից լինեք, ՉԻ ԿԱՐԵԼԻ երեխային պարտադրել հետեւյալ բաները.

1. Ստել, անգամ մանրուքների հարցում (օրինակ, ասա, որ տանը չեմ): Եվ ոչ միայն այն պատճառով, որ ստելը վատ բան է: Եթե երեխան սուտն ընկալի որպես առօրյա սովորական երեւույթ ու ստի այլոց, ապա վաղ թե ուշ կսկսի ստել նաեւ ձեզ՝ ծնողին: Իսկ դուք դա չեք էլ նկատի, քանի որ դերասանական վարպետությունը ժամանակի ընթացքում կատարելագործվում է:

2. Ուտել, երբ երեխան սոված չէ: Իհարկե, կան որոշակի նորմեր, որոնցով առաջնորդվելով, մայրիկները կերակրում են իրենց երեխաներին՝ մտածելով նրա առողջության ու աճի մասին: Սակայն հիշեք, որ երեխաները միմյանցից տարբերվում են: Անգամ նույն երեխան տարբեր տարիքում տարբեր կերպ է սնվում. որոշ դեպքերում՝ մեծ ախորժակով, երբեմն էլ չեմուչում է անում, քիչ ուտում: Մեր օրգանիզմը մեզ հուշում է, թե երբ է հարկավոր ուտել կամ խմել, ինչի կարիք ունի եւ այլն: Երեխայի առողջության մասին մտածող ծնողի խնդիրն է սովորեցնել երեխային հասկանալ օրգանիզմի նշանները, լեզուն, ոչ թե ամեն գնով նրան կերցնել ապուրը:

3. Լինել այնպիսին, ինչպիսին նա իրականում չէ: Եթե ձեր բալիկը, օրինակ՝ ամաչկոտ է, ապա համակերպվեք եւ ընդունեք նրան այդպիսին: Մի ստիպեք նրան լինել ավելի շփվող (կամ թվալ այդպիսին), եթե նա ինքը չի նեղվում իր ամաչկոտությունից: Նույնը եւ՝ չափից ավելի ակտիվ ու աղմկոտ երեխաների առումով: Այո', նրանց հետ շատ դժվար է: Սակայն թույլ տվեք նրանց լինել այնպիսին, ինչպիսին որ նրանց բնույթն է: Եվ ցույց տվեք ձեր փոքրիկին, որ սիրում եք նրան այնպիսին, ինչպիսին որ կա, ոչ թե նրան որոշակի կերպար պարտադրեք:

4. Ներողություն խնդրել՝ չհասկանալով, թե ինչի համար: Երբեմն կարելի է տեսնել, որ մայրիկը խաղահրապարակում կամ դրսում բարկանում է երեխայի ինչ-որ քայլի համար ու պահանջում ներողություն խնդրել: Երեխան էլ չի ենթարկվում, կամ ներողություն է խնդրում զարմացած հայացքով՝ ինքն էլ չիմանալով, թե ինչում է մեղավոր:

Նման պարագայում, ներողություն խնդրելը դառնում է պարտադիր ու անհասկանալի գործընթաց, որն իր մեջ զղջում չի պարունակում: Ուստի մինչ կպահանջեք, որ երեխան ներողություն խնդրի, բացատրեք, թե ինչ սխալ է թույլ տվել եւ ինչի համար պետք է ներողություն խնդրի:

(Շարունակելի)

²è àÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

ՍՈՒՐՃԸ ՆՎԱԶԵՑՆՈ՞ՒՄ Է ՄԱՀՎԱՆ ՎՏԱՆԳԸ

Սուրճի օգտագործման հարցով շատ նյութեր եմ կարդացել. միմյանց հակադրվող, երբեմն էլ՝ միմյանց կտրականապես ժխտող: Վերջապես գիտնականները չե՞ն կարող գալ միասնական եզրակացության՝ սուրճի օգտագործումը օգտավե՞տ է, թե՞ վնասակար:

Տ. Մնացականյան

Բաթումի

Սուրճի ամենօրյա գործածումն ավելի քան 15 տոկոսով նվազեցնում է մահվան վտանգը միջին տարիքի եւ տարեց մարդկանց մոտ: Այս մասին ասված է Ճապոնիայի Ուռուցքաբանական ազգային կենտրոնի՝ մայիսի 7-ին հրապարակված զեկույցում:

Մասնագետները կատարել են ընդգրկուն հետազոտություն, որին մասնակցել է 40-ից մինչեւ 69 տարեկան ավելի քան 90 հազար մարդ: Հարցվողներին առաջարկվել է լրացնել իրենց ամենօրյա սննդաբաժնին վերաբերող հարցաթերթիկները: Դրանից հետո, Ուռուցքաբանական կենտրոնի աշխատակիցներն ստացված տեղեկատվությունը զուգադրել են վերջին 19 տարվա ընթացքում մահացության վերաբերյալ տվյալների հետ:

Արդյունքում, նրանք հանգել են այն եզրակացության, որ նրանց մոտ, ովքեր օրական 1-2 գավաթ սուրճ են ըմպում, մոտ ժամանակներս մահանալու վտանգը նվազում է 15 տոկոսով: Ըստ որում, օրական 3-4 գավաթ ըմպողների թվում այս ցուցանիշը նվազում է 24 տոկոսով:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍ

Մենաստաններում փակված ճգնավորները ոչ միայն երկար են ապրում, այլեւ պահպանում են մտքի պայծառությունն ու մարմնի առույգությունը:

Մենաստաններում գաղտնիքները շատ են, սակայն երկարակեցության բաղադրատոմսերից մեկին կարող ենք հասու լինել նաեւ մենք՝ աշխարհիկ կյանքով ապրողներս: Այն կօգնի օրգանիզմը մաքրել վնասակար նյութերից, բարելավել նյութափոխանակությունը, բարձրացնել դիմադրողականությունը:

Վերցրեք 100-ական գրամ չոր երիցուկ, արեւքուրիկ, անմոռուկ եւ կեչու բողբոջ: Բոլորը մանրացրեք, խառնեք, լցրեք ամուր փակվող չոր տարայի մեջ: Երեկոյան այդ խառնուրդից վերցրեք 1 թեյի գդալ, վրան ավելացրեք կես լիտր եռացրած ջուր եւ կափարիչով ծածկեք 20 րոպե: Հետո քամեք: Լցրեք 1 բաժակ այս թուրմից, մեջը լուծեք 1 թեյի գդալ մեղր: Խմեք քնելուց առաջ (գոլ վիճակում): Երկրորդ բաժակը խմեք առավոտյան, նախապես տաքացնելով, կրկին՝ մեղրով, ուտելուց 20 րոպե առաջ: Եփուկը պետք է խմել ամեն օր, մինչեւ խոտերը վերջանան: Երիտասարդացման այս կուրսը պետք է անցնել 2 տարին մեկ անգամ:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Տղամարդկանց կողմից զգացմունքայնության դրսեւորումը սովորաբար անվայել է համարվում: Իսկ արցունքներն ընդհանրապես անթույլատրելի են: Տղամարդը պետք է զուսպ լինի եւ վերահսկի իր բոլոր արարքները:

Բայց հին դարերում ամենեւին էլ այդպես չէր: Միջնադարյան հերոսներն ի ցույց էին դնում իրենց զգացմունքների ողջ գունապնակը՝ կատաղությունից մինչեւ կիրք, վշտից մինչեւ աննկարագրելի ցնծություն: Եվ արցունքներն էլ տարու չէին, այլ միանգամայն նորմալ երեւույթ: Այդ դեպքում, ինչո՞ւ տղամարդիկ հրաժարվեցին իրենց զգացմունքներն արտահայտելուց...

Այժմ իր զգացմունքների մասին հարցին տղամարդն ավելի շուտ կպատասխանի, թե ինքն ինչ է մտածում, քան թե՝ ինչ է զգում:

Բայց յուրաքանչյուր տղամարդու դեպքում այս ամենը խիստ անհատական է: Նրանց մի մասը տառապում է ինքնատիրապետման ավելցուկից, մյուս մասը՝ դրա բացակայությունից եւ չափից ավելի տաքարյունությունից: Ընդհանրապես ապացուցված է, որ զգացմունքայնությունը կապված է ինտելեկտի հետ: Որքան մարդու մտավոր մակարդակը բարձր է, այնքան նա ավելի լավ է կարողանում ճանաչել իր եւ մյուսների զգացմունքները, եւ այդքան ավելի հաջողությամբ է կարողանում դրանք ղեկավարել: Համենայնդեպս, սեփական զգացմունքները զսպելու պատճառով տղամարդիկ կյանքում շատ դժվարություններ են ունենում: Այժմ գիտնականների կողմից սկսել են մշակվել հատուկ ծրագրեր, որոնք տղամարդկանց օգնում են ավելի անկաշկանդ լինել զգացմունքների արտահայտման հարցում: Մասնագետներն ասում են, որ ամեն ինչ, նախեւառաջ, կախված է դաստիարակությունից, քանի որ ծնողներն իրենք պետք է ձգտեն իրենց երեխայի զգացմունքային պաշարը հարստացնել:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

Ապստամբ ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ
(1888-1955)
Հայ զորավար

Չեմ բաժանում լավը վատից, զի պակաս է ուսումը իմ...

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Բարեկամությունը բավականանում է հնարավորով՝ չպահանջելով հարկ եղածը:

ԱՐԻՍՏՈՏԵԼ
(մ.թ.ա.384-մ.թ.ա.322)
Հույն փիլիսոփա

Միայն ընկերոջ ձեռքը կարող է սրտից փշերը հանել:

ԿԼՈԴ ԱԴՐԻԱՆ ՀԵԼՎԵՑԻՈՒՍ
(1715-1771)
Ֆրանսիացի փիլիսոփա

Աշխարհում ընկերությունից ավելի լավ ու հաճելի ոչինչ չկա. առանց ընկերության աշխարհը կզրկվի արեւից:

ՑԻՑԵՐՈՆ
(մ.թ.ա.106-մ.թ.ա.43)
Հռոմեացի հրապարակախոս

Երբ ճշմարտությունը ուզում ենք ուժով ճնշել, նա խորամանկությամբ դուրս է պրծնում: Փակեք նրա բերանը ցերեկով, եւ նա կխոսի գիշերը:

ՍՏԵՖԱՆ ՑՎԱՅԳ

(1881-1942)
Ավստրիացի գրող

Կյանքում կարեւոր է, թե ով է հատկապես ասում ճշմարտությունը: Ոմանց բերանում ճշմարտությունն էլ է ստի վերածվում:

ԹՈՄԱՍ ՄԱՆ
(1875-1955)
Գերմանացի գրող

Միշտ չէ , որ կարելի է ասել ճշմարտությունը, եթե այդպես է, ապա դրանից դեռեւս չի հետեւում, թե պետք է ստել:

Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àÎÜ°ð

** - Որքան է նիհարել կինդ վերջերս: Այդ ի՞նչ դիետայից է օգտվում:*

- Նա ուրիշ ճար չուներ: Նրա համար գնեցի շքեղ, թանկ զգեստ, որի մասին նա նույնիսկ չէր էլ երազում: Բայց՝ երկու չափս փոքր:

** - Հայրի'կ, ես ցանկանում եմ ինչ-որ բան նկարել, բայց չունեմ վարդագույն ներկ: Կգնե՞ս:*

- Ինչո՞ւ գնեմ: Եփիր մի քանի նրբերշիկ, եւ դու կունենաս ամենահսկական վարդագույն ներկը:

** Հիշի'ր, պետը քեզանից արագ է կողմնորոշվում: Եվ երբ դու միայն մտածում ես լավ որոշման մասին, նա արդեն ընդունում է վատը:*

** - Դու հիմար ես:*

- Բայց հո գեղեցի՞կ եմ:

- Ո՞վ է քեզ ասել:

- Դու:

- Եվ դու հավատացե՞լ ես:

- Իհարկե:

- Ուրեմն հիմար ես:

- Բայց հո գեղեցի՞կ եմ:

** Ձանգ՝ տուրիստական ընկերություն.*

- Բարեւ Ձեզ, մենք կցանկանայինք հանգստանալ:

- Եվ որքա՞ն գումար ունեք դրա համար:

- Դե', տասնհինգ լարի:

- Հանգստացե'ք...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Հունիսի 3-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանց ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահ, Սերբիայի առաջին փոխվարչապետ, արտգործնախարար Իվիցա Դաչիչին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:

Սերժ Սարգսյանը բարձր գնահատեց ԵԱՀԿ գործունեությունը եւ դերակատարումը ոչ միայն որպես ԼՂ հիմնախնդրի կարգավորմամբ զբաղվող հիմնական կառույցի, այլ նաեւ ամբողջ Եվրոպայում անվտանգության պահպանմամբ զբաղվող կազմակերպության:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ հայ-սերբական երկկողմ հարաբերությունների օրակարգը եւ զարգացման հեռանկարները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՉԵԽԻԱՅՈՒՄ



Պաշտոնական այցով Չեխիայի Հանրապետությունում գտնվող Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը Պրահայում հանդիպեց Չեխիայի վարչապետ Բոհուսլավ Սոբոտկայի հետ:

Դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, անցկացվեց երկու երկրների վարչապետերի առանձնազրույցը, որին հաջորդեց ընդլայնված կազմով հանդիպումը:

Զրուցակիցները քննարկեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս, անդրադարձան Հայաստան-Եվրամիություն, Հայաստան-ԵԱՏՄ փոխգործակցությանը:

Ընդլայնված կազմով հանդիպումից հետո, տեղի ունեցավ երկկողմ համագործակցության մասին փաստաթղթերի ստորագրման արարողությունը:

Պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանդիպում է ունեցել Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատի նախագահ Յան Համաչեկի հետ:

Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը Պրահայի Սենովաժնե հրապարակում ծաղկեպսակ է դրել հայ-չեխական բարեկամությունը խորհրդանշող խաչքարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻՆ

Աշխատանքային այցով Ղազախստանում գտնվող վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարական պատվիրակությունը մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին: Նիստում ելույթով հանդես եկան ԵԱՏՄ անդամ պետությունների վարչապետերը:

Նիստի ընթացքում, ԵԱՏՄ անդամ երկրների կառավարությունների ղեկավարները քննարկեցին ԵԱՏՄ շրջանակում հետագա համագործակցության զարգացմանն ուղղված մոտ երկու տասնյակ հարցեր: Նիստի արդյունքում ստորագրվել եւ հավանության են արժանացել մի շարք փաստաթղթեր, որոնք ամրագրում են անդամ պետությունների փոխգործակցությունը՝ տնտեսության բազմաթիվ ոլորտներում: Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստից հետո, ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Վիետնամի միջեւ համաձայնագիրը:

ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է ՄԵԿ ՏԱՍՆՅԱԿԻՑ ԱՎԵԼԻ ԳՐՔԵՐ

Հայաստանի սփյուռքի նախարարության աջակցությամբ, նախորդ տարվա ընթացքում մեկ տասնյակից ավելի գրքեր են հրատարակվել՝ ծեռնարկներ, ուսումնասիրություններ, տարեգրքեր, որոնք հասարակության դատին ներկայացվեցին հունիսի 1-ին: Շնորհանդեսին մասնակցեցին Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ, անդամներ, գրքերի հեղինակներ:

Հայաստանի սփյուռքի նախարարը շնորհակալություն հայտնեց հետազոտությունների հեղինակներին:

Սփյուռքի նախարարության աջակցությամբ հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի «Programs of Genocide in the Ottoman Empire (1876-1920)», Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանի «Սփիւռքահայ գրականութեան նուաճումները եւ զարգացման միտումները (1920-1960-ական թթ.)» գիրքը:

Ներկայացվեցին նաեւ Վ.Բարխուդարյանի, Հ.Ալեքսանյանի «Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն», Վ.Գրիգորյանի, Լ.Կարապետյանի, Ս.Հարությունյանի, Ն.Հովհաննիսյանի եւ այլ հեղինակների իրավական դաշտի ուսումնասիրություն», «Հայոց ցեղասպանության թեման իտալական գրականության մեջ», «Արեւմտահայերենի եւ արեւելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն», «Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ» գրքերը, «Գրական սփյուռք-2014» տարեգիրքը, «Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. խոչընդոտներ եւ հնարավորություններ» եւ 2014թ. հրատարակված այլ հետազոտություններ:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ 11 ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ԴԻՄՈՐԴ

Հայաստանում տասնմեկ հազարից ավելի դիմորդ այս տարի կմասնակցի միասնական քննությունների: Քննությունները մեկնարկեցին հունիսի 2-ին:

Հունիսի 2-ին դիմորդները քննություն հանձնեցին «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ընդհանուր պատմություն» («Համաշխարհային պատմություն») առարկաներից:

Քննություններն անցկացվում են Հայաստանի 34 քննական կենտրոններում: Ընդհանուր առմամբ, գրանցվել է 11 հազար 803 դիմորդ: Նախորդ տարվա հետ համեմատած՝ տարբերությունը շատ քիչ է: Ցուցանիշը մոտ է նախորդ տարվան, բայց մոտ 400 դիմորդ պակաս է, քան նախորդ տարի:

Դիմորդները «Հայոց լեզու եւ հայ գրականություն» առարկայից քննություն հանձնեցին հունիսի 5-ին, իսկ «Ֆիզիկա» առարկայից քննությունը կհանձնեն հունիսի 9-ին: «Օտար լեզու» առարկայից քննությունը կանցկացվի հունիսի 12-ին, իսկ «Մաթեմատիկա» առարկայից՝ հունիսի 16-ին: «Հայոց պատմություն» եւ «Քիմիա» առարկաների քննությունը կանցկացվի հունիսի 19-ին: «Ռուսաց լեզու» առարկայի քննությունը տեղի կունենա հունիսի 23-ին:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը եւ Արցախի Հանրապետության արտգործնախարար Կարեն Միրզոյանը հունիսի 4-ին կայացած հանդիպմանը քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի շուրջ ընթացող զարգացումները:

Զրուցակիցներն անդրադարձել են ԵՄ եւ Արեւելյան գործընկերության երկրների Ռիգայի գագաթաժողովի հռչակագրում ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ ընդգրկված ֆեւակերպումներին:

Էդվարդ Նալբանդյանն ու Կարեն Միրզոյանը մտքեր են փոխանակել ԵԱՀԿ գործող նախագահի տարածաշրջան կատարած այցելության, Հայաստանի եւ Արցախի ղեկավարության հետ ունեցած հանդիպումների շուրջ:

Հայաստանի եւ Արցախի արտգործնախարարները քննարկել են երկու արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ փոխգործակցությանն առնչվող հարցեր:

ՄԵԿՆԱՐԿՎՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Եվրամիության հետ նախապատրաստվող համագործակցության նոր փաստաթղթի ֆեւաչափը դեռեւս պարզ չէ, սակայն այն լինելու է երկկողմ բանակցվող եւ վավերացվող փաստաթուղթ: Ինչպես նշվեց Հայաստանի կառավարության նիստում, Եվրամիության Արեւելյան գործընկերության գագաթաժողովի ընթացքում ԵՄ կողմը ցույց տվեց, որ երկրների նկատմամբ գործելու են տարբերակված մոտեցումներ եւ ֆեւաչափեր, ու չեն լինելու ընդհանրական մոտեցումներ: Եվրահանձնաժողովը հավանություն է տվել համագործակցության ընդլայնման առաջարկությանը Հայաստանի հետ եւ պաշտոնական հայցադիմում է ուղարկել Եվրոպական խորհրդին, որն էլ հաստատելու է մանդատը:

ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հայոց ցեղասպանության հարցն ընդգրկված է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատի հունիսի 16-ի նիստի օրակարգում: 1915 թվականին հայերի, հույների եւ ասորիների զանգվածային սպանությունների հարցը որպես ցեղասպանություն որակելու մասին հարցը կներկայացնի բարոնուհի Քերոլայն Քոքսը:

541 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ավելի մրցունակ եւ զանազանեցված մասնավոր հատվածի ֆեւավորման նպատակով, ԱՄՆ-ի կառավարությունը կշարունակի ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով Հայաստանի կառավարությանն օժանդակության ծրագիրը: Դեռեւս 2010 թվականին երկու երկրների միջեւ այդ նպատակով ստորագրվել էր համապատասխան համաձայնագիրը, որի շրջանակում արդեն իսկ մեր երկրին ցուցաբերվել է ավելի քան 40 մլն դոլարի օժանդակություն:

Նախագծի փոփոխությունը նախատեսում է լրացուցիչ 6 մլն 683 հազար դոլարի ֆինանսական հատկացումների իրականացում, որի դեպքում, հատկացումների ընդհանուր գումարը կկազմի 51 մլն 41 հազար 565 դոլար:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համակարգը ստեղծվել է օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու մտադրություններ ունեցող քաղաքացիների համար: Այն մասնավորապես հնարավորություն է ընձեռում օգտակար տեղեկատվություն քաղել ինչպես վերադարձի ու հայրենիքում վերահնտեգրման գործընթացների եւ այս ուղղությամբ իրականացվող ծրագրերի վերաբերյալ, այնպես էլ՝ ժամանակակից էլեկտրոնային կապուղիներով կոնկրետ հարցերով դիմել հայաստանյան պետական մարմիններին:

Համակարգից տեղեկություններ կարելի է ստանալ 3 մակարդակների միջոցով.

1-ին մակարդակում համակարգի 15 ոլորտային բաժիններն են, որտեղ հանրամատչելի ոճով, հարցապատասխան ձեւաչափով զետեղված են տեղեկությունները վերադարձի հետ առնչություն ունեցող հարցերի վերաբերյալ:

2-րդ մակարդակում յուրաքանչյուր քաղաքացի համակարգի միջոցով կարող է հաշվառվել եւ իրեն հուզող կոնկրետ հարցով դիմել համապատասխան պետական մարմնին:

3-րդ մակարդակում տեսակապի միջոցով օտարերկրյա պետությունում բնակվող քաղաքացին համապատասխան պետական պաշտոնյայից կարող է ստանալ անհրաժեշտ տեղեկություններ իրեն հուզող հարցի կապակցությամբ, եթե դրա պատասխանը չի ստացել 2-րդ մակարդակում:

Համակարգի ամենաներքեւում բերված են օտարերկրյա պետություններում վերադարձին եւ վերահնտեգրմանն աջակցող կազմակերպությունների կայքերի հղումները:

ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության միգրացիոն ծառայություն
Երեւան, Հր. Քոչարի փող. 4
+(37460)275 003

Մանրամասների համար՝ www.tundarc.am

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

6.06.2015. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից

301 թվականին Սուրբ Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որն սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի:

7.06.2015. Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի

Հայոց եկեղեցու մեծ տոներից է Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սուրբ Էջմիածնի հիմնադրման տոնը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԱԿԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 26-ին արդեն վառված Օլիմպիական կրակը նույն օրը հասցվեց Բաթումի, որտեղից էլ սկսվեց Օլիմպիական կրակի շրջայցը Վրաստանի տարածքով: «Թբիլիսի-2015» Եվրոպայի երիտասարդական օլիմպիական փառատոնի խորհրդանիշ կրակը մայիսի 31-ին հասավ Ասպինձա եւ Ախալքալաքի, իսկ հունիսի 1-ին՝ Նինոծմինդա: Նինոծմինդայից Օլիմպիական կրակը ուղղաթիռով հասցվեց Ծալկա:

ՖՈՒՏԲՈԼ. ԲԼԱՏԵՐԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՀ, ԻՍԿ ԵՐԵՔ ՕՐ ՀԵՏՈ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏՎԵՑ



Ինչպես արդեն հաղորդել ենք, Ցյուրիխում մայիսի 29-ին անցկացվեց ՖԻՖԱ-ի 65-րդ կոնգրեսը, որի օրակարգում կազմակերպության նախագահի ընտրության հարցն էր:

Կոնգրեսը ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնում արդեն 5-րդ անգամ վերընտրեց 79-ամյա Ժոզեֆ Բլատերին: Մյուս թեկնածուն՝ արքայազն Ալ Հուսեյնը, հանել էր իր թեկնածությունը:

Սակայն, արդեն հունիսի 2-ին, ՖԻՖԱ-ի օրեր առաջ վերընտրված նախագահ Ժոզեֆ Բլատերը հերաժարական տվեց ՖԻՖԱ-ի նախագահի պաշտոնից:

Բլատերը հրաժարականի դիմում կներկայացնի ՖԻՖԱ-ի արտահերթ հրավիրված կոնգրեսի ժամանակ:

ՖԻՖԱ-ի նախագահի հետ կապված վերջին մի քանի ամիսների ընթացքում միջազգային ԶԼՄ-ները, հատկապես ամերիկյան մամուլը մեծ աղմուկ բարձրացրին՝ մեղադրելով նրան ե'ւ ձայներ գնելու, ե'ւ կաշառակերության մեջ: Անցած մի քանի օրերին շվեյցարական ոստիկանությունը նույնիսկ ձերբակալել էր ՖԻՖԱ-ի մի քանի աշխատակիցների:

ՇԱԽՄԱՏ. ԱԿՏԻՎՈՒՄ՝ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ

Չաքվիում եզրագիծը հատեց շախմատի կանանց Եվրոպայի 16-րդ առաջնությունը, որին մասնակցում էր 19 երկրի 98 շախմատիստուհի: Մրցաշարն անցկացվեց շվեյցարական համակարգով՝ 11 տուրով: Մայրցամաքի չեմպիոնի կոչումը՝ 9,5 միավորով, վաստակեց ուկրաինուհի Նատալյա Ժուկովան: Վրաստանը ներկայացնող Նինո Բացիաշվիլին՝ 9 միավորով, երկրորդն էր: Հայաստանի ներկայացուցիչ Էլինա Դանիելյանը՝ 8 միավորով, զբաղեցրեց չորրորդ հորիզոնականը: Վրաստանի մեկ այլ ներկայացուցիչ Սալոմե Մելիան՝ 7,5 միավորով, 8-րդն էր:

ՆՈՐ ԳԻՐՔ

«ՎԵՐՆԱՏՈՒՆ» ՏԱՐԵԳՐՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ



Լույս տեսավ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության «Վերնատուն» տարեգրքի (գլխավոր խմբագիր՝ Գեւորգ Սմբատյան) տասներորդ համարը:

Տարեգիրքը համարյա ամբողջովին նվիրված է Մեծ եղեռնի 100-ամյակի տարելիցին: Լույս տեսած համարում վեց խորագրի տակ՝ «Չափածո եւ արձակ», «Հյուրասրահ», «Մեր նոր վերնականները», «Թարգմանություններ», «Այլալեզու գրողներ», «Վերնատան» հյուրն է դրամատուրգը» զետեղված են 43 հայտնի ու անհայտ վրաստանցի, հայաստանցի եւ հեռավոր արտասահմանից ստեղծագործողների գործերը: Առանձնակի ուշադրությամբ է ընթերցվում Երեւանի Հովհ.Թումանյանի թանգարանի տնօրեն Նարինե Թուխիկյան-Խաչատուրյանի հոդվածը՝ «Հովհաննես Թումանյանը Հայոց ցեղասպանության տարիներին»:

Տարեգիրքը, որը լույս է տեսնում 1997 թվականից, տպագրվել է Թբիլիսիի «Մծիգնոբարի» հրատարակչությունում, Հայաստանի սփյուռքի նախարարության մեկենասությամբ:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԲԱՐԳԵՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՓԻՐՈՍՄԱՆՈՒ ԿՏԱՎԸ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ՎՐԱՍՏԱՆ



Ինչպես տեղեկացրել է «Ռուսթավի 2» հեռուստաընկերությունը, Վրաստանի նախկին վարչապետ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին Լոնդոնի աճուրդում ձեռք բերեց վրացի հայտնի նկարիչ Նիկո Փիրոսմանու «Արսենալյան լեռը գիշերը» նկարը հանձնել Վրաստանի Արվեստի պետական թանգարանին:

Փիրոսմանու «Արսենալյան լեռը գիշերը» նկարը հունիսի 1-ին վաճառվել է Christie`s-ի աճուրդում: Այն մեկուկես միլիոն դոլարով ձեռք է բերել Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին: Աճուրդում Փիրոսմանու գործը ներկայացվել է «Ռուսական արվեստ» բաժնում, ինչն ավելի վաղ հարուցել է Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության դժգոհություն:

«Արդեն հայտնի է դարձել, որ նկարը կհանձնվի Արվեստի պետական թանգարանին»,- հայտարարել է հեռուստաընկերությունը:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Արժանապատիվ ՏԵՐ ՄԱՆՈՒԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ.

Այսօր Ձեր ծննդյան օրն է: Այս առիթով ի սրտե շնորհավորում եմ Ձեզ: Մաղթում եմ քաջառողջություն, անսահման երջանկություն, առաջընթաց Ձեր պանծալի եւ ազգանվեր գործում: Մայր հայրենիքի կարոտն ու սերը անշեջ կրակի պես ջերմացնում է Ձեր հոգին: Անսպառ եռանդը անսասան եւ անվարան կպահեն Ձեր վեհ առաքելությունը եւ առ Աստված աղոթքները: Ամենակարող Տերը զորավիգ ու պահապան Ձեզ:

Խորին հարգանքով եւ անկեղծ ցանկություններով՝ Սուսաննա Մանվելյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ArmaniTravel-ը կազմակերպում է 1-2 օրյա ճանաչողական տուր Թբիլիսիում (աշակերտների համար):

Տուրի շրջանակներում, նախատեսված են այցելություններ Թբիլիսիի էջմիածին եկեղեցի, Սամեբա, Աբանոթուբանի, Բուսաբանական այգի, Նարիղալա (ներառյալ՝ ճոպանուղի), Ռիղե, Ձվելի Թբիլիսի, Ազգային Թանգարան, Մթածմինդա (ներառյալ՝ 2 կարուսել), Սուրբ Գեւորգ եկեղեցի եւ Սայաթ-Նովայի գերեզման, Սիոնի

Վարձը՝ մեկ անձի հաշվով մեկ օրվա համար՝ 59 լարի, մեկ գիշեր-2 օրվա համար՝ 77 լարի:

Վճարը ներառում է ճանապարհածախսը, հարմարավետ միկրոավտոբուսով (Ախալքալաքի-Նինոծմինդա-Թբիլիսի եւ հակառակը), մուտքի տոմսը, ուղեկցորդ, նախաճաշ: 13 հոգուց ավելի խմբի դեպքում, անվճար կարող են մասնակցել տնօրենը կամ դասղեկը:

Սիրով սպասում ենք ձեզ:

Զանգահարեք՝ Հեռ: 577 25 74 76 / 579 08 79 05

E-mail:turizmgeorgia@gmail.com

FB: Turizm Georgia

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քաղաք Հայաստանում: 6.Ա.Դյումա «... Մոնտե Քրիստո»: 9.Երիտասարդ, խոստումնալից դերասան ... Լեւոնյան: 10.Քանդված, քարուքանդ եղած: 12.Օֆելյան մտերմիկ շրջապատում: 13.Մոտակա, մերձ, մոտիկ գտնվող: 16.Պարի տեսակ: 19.Հրոսակ, հրի ու սրի մատնող հեծյալ: 21.Սլավոնական ազգ: 22.Ծրարի մեջ եղած կապի միջոց: 25.Հնդկականը Թումանյանի լեզվում: 27.«Վրաստան» թերթի հոդված «Թբիլիսյան ...ներ»: 20.Դես ու ...: 32.Ձինվորականի ուսերին: 33.Ձզվել, ատել: 34.Բնակարան, ապրելու տեղ: 35.Սարսափազդու, վախենալու: 38.Գետ Ռուսաստանում: 40.Ծովայինի խմիչք: 42.Գրին ..., իզի ...: 43.«Անձրեւից ... յասամանն անգամ» (Գ.Սարյան): 45.Երեւան ... խանութների ցանց: 46.Բրազիլացի հանրաճանաչ ֆուտբոլիստ: 48.Թռչնի ձագ: 49.Զգոն, զգաստ: 52.Մարկոս ... Ալիմյան: 54.Միանիշ, կենտ թիվ: 55.... Ձավես: 56.Նիհար, ոչ հաստ: 58.Տոն՝ Մարտի ...: 59.Ծեր, սպիտակած մազերով: 61.Կատվազգի գազան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Հայկական գինի: 3.Դրախտի առաջին բնակիչը: 4.«...ը փորձանք չի բերում»: 5.Լուսամուտի ...: 7.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված հայ վիպասան: 8.Վանա լճում հայտնի ձուկ: 11.Կորիզապտուղ: 14.Հայոց մայր գետը: 15.«Ինչու է աղմկում գետը» ֆիլմի հերոս: 17.Ականատես, ներկա գտնվող: 18.Կոմիտասի երգերից: 20.Ա.Բակունցի հերոսներից: 23.Ծովային փափկամորթ: 24.Մթնոլորտային տեղում: 26.Գույն, երանգ: 28.Հագուստի ներսի մասում: 29.Օվկիանոսային ալիք: 31.Բնագավառ: 33.Ձիու ոտնաման (ժող.): 36.Մորթատու գազանիկ: 37.Կադր, մաս, արար (թատրոնում): 39.Ռուսական ցար Իվան ...: 41.Օրենքի պաշտպան: 44.Ծանր հանցագործություն: 46.Կտոր, մաս, թիքա: 47.Գերեզմանատուն Փարիզում՝ Պեր ...: 50.Ձակո, արա: 51.Նավահանգիստ Վրաստանում: 53.Կայենի զոհը: 57.Որձ, տղա: 60.«... երկու տառ, ... հասարակ մի դերանուն» (Պ.Սեւակ):

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Մյուռենե: 8.Ամիկո: 9.Սեն: 10.Վզնոց: 13.Դիեգո: 18.Պռոշ: 19.Առաջանալ: 22.Անիղձ: 23.Իդիլիա: 28.Ուտեստ: 29.Բերած: 32.Որմ: 33.Փիսո: 34.Ասանկ: 37.Բոա: 39.Օլգա: 41.Ալսու: 44.Հրատ: 46.Ժորժ: 47.Բաս: 49.Կոխ: 50.Սամսունգ: 52.Ցիան: 54.Գաննա: 55.Դեգա: 56.Յա: 57.Անդին: 58.Ծածկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Քուին: 2.Լենց: 3.Ժեստ: 4.Կանդ: 5.Թիթեռ: 6.Կոտոշ: 11.Ձառա: 12.Ողջի: 14.Իպրիտ: 15.Գորիս: 16.Ինձ: 17.Էլի: 20.Անդրի: 21.Աղածո: 24.Դումա: 25.Լեթա: 26.Ատակ: 27.Դոդո: 30.Եփել: 31.Ասմա: 35.Ստաժ: 36.Նոսր: 37.Բոր: 38.Ավտոգեն: 40.Գուսան: 42.Լոբի: 43.Ուժանակ: 44.Հասան: 45.Ակնդի: 48.Ասամ: 51.Մնա: 52.Ցած: 53.Այծ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445